

# Solar for Jajur

Բյուջե

## Նպատակը

Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի բժշկական ամբուլատորիան ապահովել ժամանակակից բժշկական սարքավորումներով և գույքով:

## Նկարագրություն

Շիրակը ամենաբարձր աղքատության ցուցիչ ունեցող մարզերից մեկն է ՀՀ-ում:
Շիրակի մարզի բազմաթիվ բժշկական ամբուլատորիաներ չունեն ժամանակակից և լիարժեք գործունակ բժշկական սարքավորումներ ու պարագաներ, ինչը զգալիորեն սահմանափակում է որակյալ առողջապահական ծառայությունների մատուցումը: ՀՕՖ-ը նպատակ ունի աջակցել հնարավորինս շատ ամբուլատորիաների՝ դրանք վերազինելով ժամանակակից բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ գույքով:

Ծրագրի իրականացումից հետո գյուղական բնակավայրերի բնակիչները կկարողանան անհրաժեշտ բուժօգնությունը ստանալ իրենց համայնքում՝ խուսափելով ավելի մեծ բնակավայրեր գնալու անհրաժեշտությունից, ինչը հատկապես կարևոր է ձմռան ամիսներին, երբ եղանակային ծանր պայմանների պատճառով ճանապարհները հաճախ դառնում են դժվարանցանելի կամ անանցանելի:

Առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավումը կնպաստի բնակչության առողջապահական իրազեկվածության բարձրացմանը, հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, քրոնիկական հիվանդությունների արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև կնվազեցնի չբուժված դեպքերն ու կանխարգելելի մահացության մակարդակը համայնքում:

## Բյուջե

| Անվանում | Քանակ/հատ | Արժեք | Ընդամենը |
|---|---|---|---|
| 10 կվ Արևային կայան | 1 | 2500000 | 2500000 |
| Քարտապահարան | 4 | 75000 | 300000 |
| Սպասասրահի աթոռ | 6 | 15000 | 90000 |
| Գրասենյակային աթոռներ | 4 | 20000 | 80000 |
| Բժշկական սեղան դարակներով | 2 | 45000 | 90000 |
| Դեղորայքի պահարան | 1 | 50000 | 50000 |
| Շտատիվ | 4 | 13000 | 52000 |
| Մեխանիկական տոնոմետր | 2 | 3500 | 7000 |
| Նորածնի տնայցի կշեռք | 2 | 50000 | 100000 |
| Մանկական տոնոմետր | 2 | 4500 | 9000 |
| Հեռահար ջերմաչափ | 2 | 10000 | 20000 |
| Օտոսկոպ | 1 | 20000 | 20000 |
| 1 բուժօգնության պայուսակ | 2 | 63000 | 126000 |
| Ռինոսկոպ | 2 | 30000 | 60000 |
| Քայլակ | 1 | 18000 | 18000 |
| Հենակ | 1 | 8000 | 8000 |
| 3 փեղկանի շարժական շիրմա | 2 | 40000 | 80000 |
| օֆթալմոսկոպ | 1 | 30000 | 30000 |
| ԷԿԳ սարք | 1 | 500000 | 500000 |
| Բժշկական սեղան աղբաթասով | 1 | 60000 | 60000 |
| Բարորասեղան | 2 | 50000 | 100000 |
| Գրասեղան | 4 | 25000 | 100000 |

**Ընդհանուր**

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *365* ՀՀ դրամ

**֏4,400,000**